


ՕՐԱՑՈՅՑԻ ՀԻՆ ԷԶԵՐԷՆ

Առաջին թիվերը

Վենետիկյն լոյս տեսած 1757ի Օրացոյցը իր առաջին օրէն լոյս ընդունելութիւնը դառն է ազգային շրջանակներու մէջ, մասնաւորապէս Կ. Պոլիս եւ մերձակայ գաւառները, որոնք ընտրուած են իբր կեդրոն աստղաբաշխական եւ այլ կարեւոր զեկոյցներու:

«Բագուսֆ սրունեմ գորացոյց այսր տարւոյս մինչեւ 95 կամ 910 փարայ, բայց ոչ գտանեմ» կը գրէ Հ. Յակոբոս Զամէկան՝ Պոլիսէն, 1759ի Ապրիլ 29ին, եւ կը յաւելու պատմել զուարճալի դրուագ մը՝ ուր կը ցայտէ մեր հայ օրացոյցին առաւելումը:



Թիւ 1. - Հակատ 1757ի Լուսնացոյցին

Թիւնն ու ճշգրտութիւնը (Մայր Դիւան Միւիթ. Վենետիկ, տպ. 1930, էջ 197):

Օրացոյցի առաջին թիւը լոյս կը տեսնէ իբր ԼՈՒՍՆԱՑՈՅՑ: Շատ հաղուադիւտ ըլլալով այդ թիւէն մնացած օրինակները, կու տանք լուսանկարը (թ. 1), ուր որոշակի կը կարգացուի ճակատի խորագիրը իր մանրամասնութիւններով: Երկրորդ էջին վրայ կը կարգացուին կարեւոր դիտելիքներ. զիւր տարւոյն (թ.), Թոթնեակն (Դ), վերադիրն (ԺԹ), տանուաէրն (Խոյ) եւն...: Երրորդ էջով կը սկսի բուն օրացոյցը. ճախակողմը երեք նեղ սխանակներու մէջ կը ներկայացուին աւուրք լուսնի, աւուր ձայնն եւ աւուրք ամսոյն: Ասոնց դիմաց՝ շաբթուան օրը, տօները, պահքերը: Իւրաքանչիւր ամսու վերնագրին տակ նշանակուած են համապատասխան հայկականները (նոտրադիր, ըստ անշարժ տոմարի), այն է արաց, մեհեկի, արեգ եւն... մինչեւ քաղոց: Ամէն ամսու սկիզբը նշանակուած է նաեւ օրերու թիւը, արեւու ծագման, միջօրէի եւ մայրամուտի պահերը. ընթացքին նշանակուած են նաեւ լուսնի ծնունդը, քառորդը, լրում եւ այլն...: Կիրակի օրերուն նշանակուած են Համբարձիւնները:

Ինչպէս կը տեսնէք, արդէն իսկ կատարեալ օրացոյց մըն է, որոշ ուղղութեամբ:

Մեծութիւնն է 8×13, առաջին տարին 34 էջոց. յաջորդաբար կ'աճի մինչեւ 50 էջ, իւրաքանչիւր էջ 32 տող: Այսպէս մինչեւ 1830. այնուհետեւ աւելի մանր դիւրբով, բայց հասակեկ, մինչեւ 110 էջոց, մեծ. 6×10,5:

Երկրորդ տարին լոյս կը տեսնէ փոխուած վերնագրով. այլեւս է բուն ՕՐԱՑՈՅՑ, ըստ մեր ներկայացուցած նկարին

(թ. 2): Գլխաւոր նորութիւնը կը կազմէ յոյն, լատին, երբայական եւ տաճկական տօներու ներկայացումը: Կ'աւելնան Ազարիայի տարեթիւերը:


Նորութիւններ

Յաջորդաբար տարուէ տարի փոքրիկ յաւելումներով կը ճոխանայ Օրացոյցը. այսպէս կ'աւելնան ժամանակագրութիւնումաց գլխաւոր իրաց աստուածաշունչ գրքոց, նաեւ երեւելի իրաց եղելոց ի գանազան դարս. ցուցակ երեւելի եւ շարժական տօնից եւ միջոցք նոցին. ամիսի Հայոց կարգեալ ոտիւք ըստ իւրաքանչիւր տոմարաւորեանցն առ ի դիրքին սերտողութիւն հաւերակաց (1762էն ասդին յաջորդաբար): Յետոյ կու դան արեւու ծագման աղիւսակներ, ամիսներու համեմատական ցուցակներ, նաեւ արարերէն (1800էն ասդին):

1778ին, երկրորդ ներքին էջին վրայ կը յայտնուի խորհրդանշական պատկերը. իսկ վերջաւորութեան, առիթ առնելով տարւոյն ընթացքին պատահած արեւու խաւարումը, կու տայ աստղաբաշխական ծանօթութիւններ խաւարումի պատճառներուն մասին: Հուսկ կը յաւելու Վենետիկ տպուած դրքերու ցուցակ մը:

Աստղաբաշխական հետաքրքրական տեղեկութիւններ կը գտնենք 1790ին՝ Ժիրանի դօտիի կազմութեան մասին, պատկերով բացատրուած. 1797ին՝ արեւու խաւարումի մասին մանրամասնութիւններ, պատկերազարդ. 1808ին՝ հրդեհի դէմ նորագիւտ ջուրի մը մասին. հուսկ Հալլէի դիսկուրի մասին երկար բացատրութիւններ 1835ին:

Յաւելուածական ճոխ բաժին մը ունի 1848ի Օրացոյցը. 1 - Տօնաւաճառք Տաճկաստանի (թուականը, տեղը, անունը, տեւողութիւնը): 2 - Թղթատարք Օսմանեան պետութեան (9 էջ): 3 - Եւրոպական աղղաց թղթատարները (մեկնումի օրերը, տեղերը, հանդիպած վայրերու անունները, ժամանումները): 4 - Պոլսոյ չոգենա-



Թիւ 2. - Հակատ 1758ի Օրացոյցին

ւային ընթացքները՝ ըստ զանազան ընկերութեանց:

Պատմական յիշատակալից թուականներ, դարադարձերու ցուցակներ կը յայտնուին հետզհետէ աւելի ճոխ, մանաւանդ 1850էն ասդին. նմանապէս ժամանակագրական ցուցակներ (հայ եւ արաբին պատմութեան), տօնացոյցէն դուրս մնացած սուրբերու ցանկեր, օտարազգի սուրբերու տօներու ցուցակներ:

Այսպէս 1887ին օրացոյցին սկիզբը կը ներկայանան ժամանակի մեծ դահակալները իրենց ուրոյն նկարներով. Փրեզերիկոս-Գուլիէլմ Ա. (կայսր Գերմանիոյ), Փրանկիսկոս-Յովսէփ Ա. (կայսր Աւստրիոյ), Աղեքսանդր Գ. (կայսր Ռուսաց), Հովսէփ Բ. (թագաւոր Իտալիոյ):

1890ին կը ներկայացուի ժամանակի դահակալներու ցուցակը, դասաւորեալ ըստ կարգի աւագութեան հասակի ամաց. երիցադոյնն է Լեւոն ԺԳ. Քահանայապետը, ութսունամեայ. իսկ դահակալութեան շարքով երիցադոյնն է Անգլիոյ



Թիւ 3. - Ներքին պատկեր 1816ի Օրացոյցին (Չորս եղանակները)

Վիկտորիա Թագուհին, 53 տարեկէ ի վեր դա՛ բարձրացած: Նոյն տարուան թիւին մէջ կայ նաեւ մանրամասն արժեցողական մը զանազան ազգերու դրամներուն (5 էջ). հուսկ Միւթարեան գրացուցակը (20 էջ մանրատառ, նիւթի կարգով դասաւորուած):

1888ին, Օրացոյցի 132րդ թիւը կու տայ ազգային դարադարձերու ցանկ մը.

- 38 Արտաշէս Բ. դահակալէ
- 388 Գաղաւոն Կամարական կոմս Հայոց
- 688 Ներսէս Կամարական Պատրիկ
- 888 Աշոտ Արծրունի որդի Դերենկան
- 1488 Նահատակութիւն Աստուածատուրյ և Անտոնի Կաֆայեցոց
- 1788 Հաստատութիւն Միւթարեան Տպագրատան ի Ս. Ղազար
- 1888 Սկիզբն Դ. Շրջանի Հայկին, որու մասին՝ ծանօթութիւններ:

Իրապէս, 428 թուականէն վերջ՝ ահա կը լրանային Հայկայ շրջանին 1460 տարեկները, ու դարձեալ Նաւասարդը կը զուգադիպէր Օգոստոսի 11ին: Այդ առիթով,

մինչ մաղթողական իղձերով կ'ողջունեն Հայկայ տոմարին Դ. Շրջանը, հայրենաշունչ տողերով ապագային կը յանձնեն չնորհաւորական դրացումներ:

Օդերեւելութարանական գուշակութիւնները կը սկսին 1828ով և կը շարունակուին անխափան մինչեւ օրս, 1944-1949ի շրջանին համար փոքրիկ փակագիծով մը: Այս բաժինն է որ շատ աւելի հետաքրքրական դարձուցած է օրացոյցը, և երբեմն ձեռք ձեռք խլուած միամիտ հաւատքով, և նոյնիսկ օտար լեզուներու ալ թարգմանուած: Պոլիս և իր շրջակայքն է եղած միշտ տեղեկութիւններու մեկնակէտը:

Սորհրդանշական ոտանաւորը, որ կը բանայ օրացոյցին ամէն մէկ թիւը, կը սկսի 1830ով: Երբեմն մէկէ աւելի ոտանաւորներ ալ կը դրուին (1842, 1846), սկիզբը, մէջն ու վերջը. 1847ի թիւը ունի հինգ ոտանաւոր. 1848ին՝ չորս: Բացառաբար ոտանաւոր չունին 1834 և 1839 տարիները. նմանապէս առանց ոտանաւորի են 1891-1902 տարիներու ընթացքին՝ նոր տոմարով պատրաստուած առանձին թիւերը:

Մինչեւ իսկ ուշագրաւ են 1846-1857ի շրջանի կողքերուն զեղեցիկ և ալլաղան դժադրութիւնները, երկրաչափական ձեւերու համադրութիւններով պատրաստուած, նուրբ ճաշակով:

Այսպէսով Օրացոյցը դարձած էր իր արտաքին տեսքով ալ հրապուրիչ. իսկ բովանդակութեամբ ալ հետաքրքրական, տեսակ մը շտեմարան կարելորդ գիտելիքներու. տեսակ մը Տարեգիրք, որ ինչ ինչ տարիներ ունեցած է նաեւ կրկին տպագրութիւն, ինչպէս 1917ին:

Տպարաններ և Գրացուցակ

Օրացոյցի առաջին տարին տպուած է Վենետիկ: Չէ նշանակուած տպարանին անունը: Հ. Գար. Զարբհանալեան կը համարի որ տպուած ըլլայ Ս. Ղազարու մէջ (Հայկ. Մատենագիտութիւն, 1883, էջ 721). ինչ որ հաւանական չի թուիր, ու

րովհետեւ Ս. Ղազար տակաւին չունէր սեփական տպարան: Հաւանօրէն Անտոն Պոթոլիի տպարանէն լոյս տեսած է առաջին թիւը, ինչպէս յաջորդաբար 1758-1763 և 1767-1773 տարիներուն:

Առ ի տեղեկութիւն, տարիներու կարգով կու տանք անունները նաեւ Վենետիկի միւս տպարաններուն, ուր տպուած են Օրացոյցին առաջին 35 տարիներու թիւերը.

- 1764 ի տպ. Ֆրանչիսկոսի Ստեփանեան
- 1765-66 ի տպ. Որլանտեան Ստեփանոսի
- 1774-85 ի տպ. Դեմետրեայ Թէոդոսեանց
- 1786-87 ի տպ. Պետրոսի Վաղվազեանց
- 1788-89 ի տպ. Յովհաննու Փիացեան

Ինչպէս ծանօթ է, ասոնք բոլոր խալական տպարաններ են, որոնց տէրերու անունները միայն հայացած են:

Նկատելի է որ փերոյիչեալ տպարաններէն Ֆրանչիսկոսի Ստեփանեան կոչուածը, անծանօթ մնացած է ՏԻՊ ՈՒ ՏԱՌԻ հեղինակին (1912), ինչպէս նաեւ Գարեգին Լեւոնեանի, իր «Հայ Գիրքը եւ տպագրութեան արուեստը» հատորին մէջ, տպ. Երեւան, 1946ին:

1790-92 տարիներուն, Օրացոյցը կը հրատարակուի Միւթարեան Հայրերու սեփական տպարանին մէջ, Ս. Ղազար, բայց տակաւին յանուս Անտոնի Պոթոլի: Անուհետեւ պարզապէս ի վենետիկ ի վանս Սրբայն Ղազարու յայտարարութեամբ:

Գրացուցակի բաժին մը սկսած է լոյս տեսնել Օրացոյցին մէջ 1778էն ասդին, պարբերաբար: Նիւթի կարգով դասաւորուած շատ աւելի մանրամասն ու մանրատաճուցաններ լոյս կը տեսնեն 1800ի վերջերը. այսպէս 1884ին, 1888ին, 1889ին, 1891ին. երկարագոյնն է 1894ին, 43 էջ, նիւթի եւ հեղինակներու դասաւորութեամբ:

Կը համարինք որ հետաքրքրական ըլլայ 1799ին հրատարակուած գրացուցակը, որ կու տայ պատկերը ամբողջ այդ դա-

րուն Միւթարեան գրական գործունէութեան, մանաւանդ վերջին յիսնամեակի շրջանին:

ՅԱՆԿ ԳՐՈՑ ՏՊԱԳՐԵԼՈՑ Ի ՎԵՆԵՏԻԿ
Ի ՄԻԱԲԱՆԻՑ ՎԱՆԱՑ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ

Աստուածաշունչ հին և նոր Կտակարանաց Ալլաբարի Համառօտութիւն աստուածաբանութեան Ակն հոգւոյ
Ազօթամատոյց սրբոյն Յովսէփայ
Ամարանոց Բիզանդիոյ, ոտանաւոր ըստ մասին Առաքինութեանց գիրք
Աւետարան

Բազմաբար հայոց լեզուի գրաբառ
Բազմաբար մնացորդաց, յատուկ անուանց, ի գրաբառէ յաշխարհաբառ և յաշխարհաբառէ ի գրաբառ
Բուրաստան աղօթից

Գործք առաքելոց

Դժոխք բացեալ
Դրախտ հոգւոյ

Երկրաչափութիւն նորատիպ

Թովմա Գեմրացի. յաղագս նմանօղ լինելոյ Քրիստոսի
Թուարանութիւն մեծ գրաբառ
Թուարանութիւն փոքր աշխարհաբառ

Ժամագիրք փոքր

Իմաստասիրութիւն բարոյական

Լամբրոնացւոյն ատենաբանութիւն. և ճառք ի համարձուած Քրիստոսի, և ի գալուստ Հոգւոյն սրբոյ

Խոկմունք քրիստոնէականը
Սորհուրդ աստուածաշնորհութեան
Սրատք կրօնաւարական կատարելութեան

Կշիռ Ժամանակի
Կտակարան
Կրթութիւն աղօթից
Կրթութիւն ապաշխարողի

Հանդերձեալ կենաց գիրք
Հիւսեակ բարեբանութեան սուրբ Աստուածածնին
Հոգեւորական պատերազմ
Հրաշից սուրբ Աստուածածնին պատմութիւնը

Ղազար Փարպեցի. պատմութիւն Հայոց

Ճաշոց գիրք մեծ
Ճարտասանութիւն

Մեկնութիւն Աւետարանին Մատթէի
Մեկնութիւն գրոցն Ժողովողի
Մեկնութիւն Երգերգոց՝ Նարեկացւոյն
Մեկնութիւն յայտնութեան Յովհաննու

Մովսեսի քերթողհորն՝ գերբ անուանեալ Պիտո-
յից, հանդերձ բացատրութեամբ եւ ծանօթու-
թեամբ. նորատիպ
Մտածութիւնք ի վերայ չարչարանացն Քրիստոսի
Յարացոյց ապաշխարողի

Նարեկ համառօտ քաղուածով, պատկերօք
Նարեկ ամբողջ. նորատիպ փոքր

Ուղ եւ ծով աստուածարանութեան

Պատմութիւն հայոց. Գ. հատոր
Պարտէզ հոգեւոր
Պսակ կուսին

Ռոտրիկիւնց եռամասնայ

Սալէզացի
Սաղմոս, մեծ զբով. նորատիպ
Սաղմոս միջակ
Սաղմոս փոքր
Սկզբունք քրիստոնէական կենաց

Վարդ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Վարդ Յովհաննու առն Աստուծոյ
Վարդ սրբոյն Անտոնի անապատականին

Փիլիսոփայութիւն. Գ. հատոր

Քարոզչիք
Քերականութիւն հայոց լեզուի. նորատիպ
Քերականութիւն իտալական լեզուի
Քրիստոնէական դրարաւ
Քրիստոնէական աշխարհարաւ՝ հանդերձ Տաղա-

★

Տեարակ ալբուրեկից
Տեարակ հարցմանց ի վերայ քերականութեան
Տեարակ պատմութեան ի վերայ օգտագործի գնտոյ
Տեարակ հոգեւոր խաղու հանդերձ պատկերօք
Տեարակ վարդաբանի
Տեարակ համառօտ քրիստոնէականի

Աշխարհացոյց համառարած մեծ, փորագրեալ
Աշխարհացոյց համառարած փոքր
Աշխարհացոյց Հայաստանայ
Աշխարհացոյց երկրին աւետեաց
Աշխարհացոյց չորից մասանց աշխարհի, Ասիոյ,
Եւրոպիոյ, Աֆրիկոյ եւ Ամերիկոյ, փորագրեալ
յամին 1787
Աշխարհացոյց տէրութեան Օսմանցոյց, փորագրեալ
յամին 1787
Աշխարհացոյց Սեւ ծովուն եւ չրջակայից, փո-
րագրեալ յամին 1791
Նեղուց կոստանդնուպոլսոյ, այն է Պողոս Էջի,
փորագրեալ յամին 1791
Յուցակ աւուրց լուսնի

Նկատելի են այս փոքրիկ ցուցակին մէջ
Միլիթար Աբրահօր Աստուածաշունչը,
Մատթէի Մեկնութիւնը եւ Հայկազեան
Բառարանը իր յաւելուածական բաժինով,

Չամչեանի եռահատոր Հայոց Պատմու-
թիւնը, որոնք հսկայական աշխատու-
թիւններ են: Նախնեաց դործերու հրատա-
րակութիւններէն՝ Լամբրոնացիի ձառե-
րը, Ղալար Փարպեցիի Պատմութիւնը,
Խորենացիի Գիրք Պիտոյիցը եւ Նարեկ
սկզբնաւորութիւնը կը կազմեն շուրջ քսան
տարի վերջ ծայր տնւոյ հրատարակչական
մեծ շարժումին:

Տումարական տուեալներ

Վենետիկի օրացոյցը սկսած է հրատա-
րակուիլ ըստ Յուլեան տոմարի, տալով
նաեւ լուսնական օրերու համեմատական
հաշիւը:

1793ին, առանձին սիւնակով կը սկսին
նշանակուիլ նաեւ նոր տոմարի ամսաթի-
ւերը, եւ ըստ այնմ նաեւ տօները, յաճախ
գրելով ըստ լատինաց յամ ըստ հռոմայե-
ցոց: Օրացոյցը սակայն հիմնուած է հին
տոմարի վրայ:

1830ին նոր ձեւաւորում մը տալով օ-
րացոյցին, թուականներու սիւնակները
երկուքի կը բաժնուին, զոյգ զոյգ, օրա-
ցոյցի մարմնին աջ ու ձախ կողմերը.
20 — 18. (այն է՝ Չայն օրուան, Օր-
ուան թուականը ըստ հին տոմարի, Լա-
տինաց տոմարի թուականը, Տաճկական
թուականը): Այդ թուականով այլեւս կը
դադրի լուսնական հաշիւներու սիւնակը:

1876ին Չայներու սիւնակը կ'անցնի օ-
րացոյցի մարմնին մէջ, եւ անոր տեղ կը
նշանակուին Հայկական թուականի ամ-
սաթիւներու սիւնակը՝ Ծ գլխատառով.
կ'ունենանք Ծ0 — 18 սիւնակները:

1891-1914 տարիներուն, Կիլիկիոյ Հայ
Կաթող. Պատրիարքութեան թեմերուն հա-
մար կը հրատարակուի առանձին օրա-
ցոյց, ըստ նոր տոմարի, ուր բնագրին ձա-
խակողմը դրուած 0 սիւնակը այնուհետեւ
ցոյց կու տայ ամսաթիւերը՝ ըստ Գրիգոր-
եան նոր տոմարի. մինչ աջակողմեան սիւ-
նակը կը վերածուի ՅՏԻ, այն է Յուլեան
եւ Տաճկական ամսաթիւեր: Միաժամա-
նակ սակայն լոյս կը տեսնեն օրացոյցները

ըստ հին տոմարի, հին ձեւով:

1920էն ասդին միակ օրացոյց մը կ'ել-
լէ Ծ0 — ՅԱ սիւնակներով. այս վերջին
Ա. ք կը նշանակէ՝ ըստ Արարաց, եւ կը փո-
խանակէ նախորդ շրջանի Տը, ըստ Տաճ-
կաց:

1944էն ասդին աւելի եւս կը պարզուի
օրացոյցը, զանց ընելով Հայկայ շրջանի
եւ Արարաց թուականներու սիւնակները
(Ծ եւ Ա): Այդ թուականէն ասդին, նաեւ
բնագրին մէջէն կ'անհետանան արարա-
կան, տաճկական եւ հրէական տօներու
յիշատակութիւնները, որոնք արդէն անի-
մատ դարձած էին: Ժամանակին հար-
կաւոր էին Հայերուն համար, որ Պոլիս
կ'ապրէին եւ շատ յարաբերութիւններ ու-
նէին գիրքէն շրջապատող ազգերու հետ:

Ներկայիս կը հրատարակուի ըստ նոր
տոմարի, աջակողմեան սիւնակի մը մէջ
տալով համապատասխան ամսաթիւերը
ըստ հին տոմարի, որ տակաւին դործա-
ծութեան մէջ է ինչ ինչ տեղեր, ինչպէս
Երուսաղէմ:

Հայկայ շրջանի մեծ թուականը, եւ Դ.
շրջանի թուականը, ինչպէս նաեւ Հայ-
կական թուականի տարեթիւերը կը նշա-
նակուին միայն ձախակողմէն վրայ:
1944էն ասդին դադրած են Օրացոյցին յա-
ջորդող զանազան ցանկերը: Պարզութիւնն
է ներկայ մտահոգութիւնը:

Ծիսական փարցեր

Օրացոյցին առաջին թիւէն իսկ որոշ
փորձառութիւն, հմտութիւն եւ ողջմտու-
թիւն մը կը յայտնուի տօներու բաժա-
նութեան եւ փոփոխութիւններուն մէջ
(երբ հարկ ըլլայ). մանաւանդ նոյնու-
թիւն մը՝ նման պարագաներուն:

Սկիզբէն ի վեր պատրաստուած է զըլ-
խաւորապէս Կաթողիկէ համայնքին հա-
մար. ըստ այնմ՝ Տեառնընդառաջ Փետր.ի
2ին, Աւետում Մարտի 25ին, Ծնունդ
Դեկտ.ի 25ին եւ որ ի կարգին: Սակայն
կը ցուցադրուին նաեւ Լուսաւորչական
համայնքին տօները, փակադժի մէջ կամ

իրբեւ երկրորդ յիշատակութիւն, դնելով
ըստ Հայոց բացատրութիւնը:

1829էն ասդին կը սկսի Անարատ Յգու-
թիւն բացատրութիւնը՝ Դեկտեմբերի 9ին:

Եթէ միակ անորոշութիւն եւ տարտա-
մութիւն մը կայ, այդ կը պատահի Քրիս-
տոսի Ծննդեան շրջանին, ուր միշտ կը
դժուարին կարգաւորել Աւագ տօները,
քանի որ ճրագաւորցն ու Ծնունդը յաճախ
կը զուգադիպին լուր օրեր եւ անոնց կը
յաջորդեն կիրակի կամ պահքի օրեր:
Այսպէս 1757ին Ստեփանոսի տօնը կը նը-
շանակուի Ուրբաթ օր մը, Դեկտ. 26ին.
1759ին նոյնը կը հանդիպի Կիրակի: 1760-
ին Պողոս Պետրոսի տօնը կը դրուի Դեկ-
տեմբերի 27ին Չորեքշաբթի օր մը: Եր-
բմի նոյնիսկ կը պատահի որ զուգադի-
պին Աւագ տօները Ծնունդին կամ ճրագա-
ւորցին հետ (համտ. 1761-1764 տարիներ-
ը):

Այս անորոշութիւնները կը ծագին Ծր-
նունդը Դեկտ. 25ին տօնելու ստիպումէն,
մինչ միւս կողմէ վերահաս են Յայտնու-
թեան պահքերը, մինչ կան նաեւ տօներու
յարբեր, որոնց մէջ Աւագ տօները պիտա-
ւորապէս:

Այսպէս կը քայլէ մինչեւ 1831:

1832ին կը յայտնուի նոր ուղղութիւն
մը, ըստ Հայ Կաթողիկէ Պատրիարքարա-
նի որոշողութիւններուն: Այս նոր կարգը
կը յայտնուի այսպէս.

1) Ծննդեան պատրաստութիւն մը՝
ութօրեայ պահքով, որուն բնթացքին կը
հանդիպի Աւագ տօն մը, Դաւթի Մարգա-
րէին:

2) Ծնունդէն վերջ՝ ութօրէք, որուն
բնթացքին կը տօնուին մնացած Աւագ տօ-
ները, եւ Ծննդեան պահքի առթիւ թող-
ուածները:

3) Ի պատրաստութիւն Յայտնութեան՝
չկայ պահք, որ փոխադրուած էր Ծնուն-
դէն առաջ:

4) Յայտնութենէն վերջ՝ հանդիսաւոր
ութօրէք, ինչպէս նախապէս:

Պատրիարքարանի Օրացույցը

Վենետիկի Օրացույցը 1891-ին սկսեալ մինչև 1914 թվականները լոյս կը տեսնէ. մէկը ըստ հին տոմարի, երկրորդը՝ ըստ նոր տոմարի: Այս վերջինը ճակատին վրայ կը կրէ հետեւեալ խորագիրը.

Վասն վիճակաց Պատրիարքութեանն Կիլիկիայ յորս ընկալեալ է: Առանձին թրւահամար ունին 1891-ին սկսեալ. եւ առաջին տարին կու տայ հետեւեալ աղբյւր.

Ըստ որում յղեցաւ առ մեզ ի վեհագոյն Աթոռոյ Հոգեւոր Տեառնն, ի լոյս ընծայի ահա առաջիկայս Օրացույց 1891 տարուայ, յերկրեալ ըստ նորոյ կամ Գրիգորեան բուսկանի, գոր ի գործ վարեն այժմիկ ամենայն զարգացեալ ազինք Եւրոպայ եւ այլոց աշխարհաց:

Երանի՜ բէ եւ համօրէն ազգ մեր միակամ համաձայնութեամբ, որպէս յայլ ամենայն բարեմասնութիւնս, նոյնպէս եւ յայժմիկ ձեռն արկանէր գիտն գնալ ո՛չ եթէ նորոյ իմիք, այլ գոր ունին հնագույնիմ ուղղելոյ եւ տուգագոյն հաշույ տարեմտից եւ նախանջից, որովք ոչ եւս այնուհետեւ ի մէն մի դարուց շրջան աւուրբ միով յետամնաց մնալ քան զբոլորել բնական տարւոյ կամ արեգակնային շրջանի:

Գեղեցիկ շարադրութեամբ մը ցոյց կը տրուին այս նոր տոմարով կատարուած հրատարակութեան դրդապատճառը՝ վերջին եկած հրահանգ մը, ինչպէս նաեւ այս նորին առաւելութիւնները, որ կու դայ ոչ թէ եղծանելու հայկական տոմարը, այլ դայն սրբադրելու:

Ծիսական կարգադրութեան տեսակէտով, այս նոր շրջանի օրացույցը կը հետեւի 1832-ին ի վեր եղած սովորութեան. միայն թէ չունի Ծննդեան Ութօրէքը 1891-1914. (բացառութիւն են 1897-99):

Կարեւոր անդրադառնալիք կէտ մըն է այն, որ այս նոր տոմարի թիւերուն մէջ, Ծննդեան երկրորդ օրը անպատճառ չի դրուիր Ստեփանոսի տօնը՝ երբ այդ երկրորդ օրը Կիրակի կամ պահքի օր հանդիպի. այլ կ'անցնի յաջորդ օրը, 27-ին:

Օրացույցին վերջաւորութեան կը տըրուին Հայ Կաթողիկէ Հասարակութեան կազմակերպութեան ընդհանուր ցուցակը, Ամենապատիւ Կաթողիկոս Պատրիարքէն մինչև թեմական կազմակերպութիւններն ու Հաստատութիւնները. ցուցակներ՝ Աղլային կրօնական ժողովի անդամներուն, ըստ եկեղեցական կամ աշխարհական կարգերու են. եւն... այսպէս 1891 տարուան տրուած ցուցակները կ'երկարին մինչև 15 էջ. յաջորդ տարիներուն աւելի մանրամասն եւ երկար:

Այս ցուցակներուն տեղ, հին տոմարի հրատարակութիւնը կը ներկայացնէ Մըլիթարեան Գրացուցակներ. սակայն հոն ալ երբեմն կը ներկայացուին Հայ Կաթողիկէ Հասարակութեան բովանդակ կազմին իր բոլոր կազմակերպութիւններով. 1908-ին, 1910-ին:

Նոր տոմարի թիւերը սկզբնական շրջանին չունին նաեւ առաջին քերթուածը. 1903-էն ասդին ան ալ կը մտնէ:

1914-ով կը դադրի, անշուշտ պատերազմի հետեւանքով, այս շարքին հրատարակութիւնը. յաջորդ տարիները լոյս կը տեսնեն ըստ հին տոմարի: Իսկ 1920-ով կը սկսի նոր տոմարի պաշտօնական միակ հրատարակութիւնը:

Այս հրատարակութիւնը մինչև օրերս կը դործածուի իր պաշտօնական օրացույց Հայ Կաթողիկէ Հասարակութեան:

Ներկայիս եթէ կայ քննելիք կէտ մը, այն է Ծննդեան ութօրէքի խնդիրը, որ անշուշտ չի համաձայնիր սուրբերու յիշատակութիւններուն հետ. յատկապէս Ստեփանոսի տօնակատարութիւնը՝ անպատճառ Ծննդեան յաջորդ օրը, որ կըրնայ իյնալ Կիրակի կամ Ուրբաթ:



Այս առթիւ ներուի մեզի քանի մը խօսք ըսել նաեւ այն Օրացույցին մասին՝ որ տասը տարիէ ի վեր լոյս կը տեսնէ Պէյրութէն, իբրեւ օրացույց Հայ Կաթող. Հա-

սարակութեան: Սկիզբները մանրամասն ցուցակներով, իսկ այժմ աւելի ամփոփ ձևով կը ներկայանայ: Ծիսական քանի ձևով կը հարցերու մասին է որ պիտի անդրադառնանք միայն, նկատի առնելով հայկական վաղեմի սովորութիւնն ու տոմարական աւանդութիւնը:

1) Աւետման տօնը 1948-ին նշանակուած է Աւագ Հինգշաբթի օրը, ինչ որ հակառիսական կը թուի. հարկ էր փոխադրել Զատիկէն վերջ, ըստ աւանդութեան: Ժամերգութիւն եւ Պատարագ այդ երկու տօներուն՝ անհաշտ են իրարու հետ. յետոյ աւագ Եչ.ի ապաշխարութեան կարգը եւ որ ի կարգին՝ չեն հաշտուիր Աւետման արարողութիւններուն հետ:

Նոյն Աւետման տօնը 1951-ին նշանակուած է Զատիկէն հետ միասին, Մարտի 25-ին. ինչ որ թերի կէտ մ'է տոմարական. եւ ծիսականօրէն անդործադրելի:

Դարձեալ նոյն Աւետման տօնը 1956-ին նշանակուած է Ծաղկազարդին հետ միասին, Մարտի 25-ին. նոյնպէս անճիշտ:

2) Երանելի Տէր Կոմիտասի տօնը, (տօնելի Նոյեմբերի 5-ին, ըստ կարեւորին), 1948-ին նշանակուած է Նոյեմբերի 6-ին, Շաբաթ օր, Հրեշտակներու տօնին հետ. ինչ որ ծիսականօրէն անհաշտ է: Շատ լաւ կարելի էր դնել Նոյեմբերի 4-ին, Մետրոփանոսի Հայրապետի շարքին հետ: Քանի որ անկարելի էր արդէն տօնել Նոյեմբերի 5-ին, Ուրբաթ օրը:

Նոյնը նոյն ձևով կը կրկնուի 1949-ին, Նոյեմբերի 5-ին, Շաբաթ օրը. Հրեշտակներու հետ նաեւ Եր. Տէր Կոմիտասի տօնը:

1950-ին, Եր. Տէր Կոմիտասի տօնը նշանակուած է Նոյեմբերի 4-ին, Բարդամ Անտիոքացիի շարքին հետ. Շաբաթ օր: Սակայն յաջորդ տարին, 1951-ին, նոյն տօնը նշանակուած է Ստեփանոսի Հոռմայ Հայրապետին շարքին հետ, Նոյեմբերի 5-ին: 1952-ին, նոյն տօնը նշանակուած է Մետրոփանոսի շարքին հետ, Նոյեմբերի

6-ին: Նմանապէս 1953-ին, Նոյեմբերի ճիշտ 5-ին:

Հին սխալը կարծէք կը սրբադրուի 1955-ին, երբ Նոյեմբերի 5-ին կը հանդիպի տօն Հրեշտակապետներու. եւ այս անգամ Երանելի Տէր Կոմիտասը զետեղուած է Նոյեմբերի 3-ին, Ստեփանոսի հետ:

1956-ին, Նոյեմբերի 5-ին, Ստեփանոսի Հոռմայ Հայրապետին հետ. 1957-ին, Նոյեմբերի 5-ին, Աղեփախեալ Եպիսկոպոսին հետ:

Ինչպէս կը տեսնուի այս տօնը ամէն տարի տարբեր շարքի հետ կու գայ. եւ անպատճառ փափաք մը կայ Նոյեմբեր 5-ին զետեղելու, երբ կարելիութիւն կայ. բայց ասիկա մեր տօնացոյցի հոգւոյն հակառակ է, որ սուրբերու համար հաստատուն օրեր չի ճանչնար. լաւագոյն պիտի ըլլար հաստատուն շարքի մը հետ կապել. անշուշտ պէտք է լաւ ուսումնասիրել, որպէսզի յաճախ Նոյեմբերի 5-ին հանդիպի, կամ ալ մերձաւոր օր մը: Ամէն պարագայի, երբեք Հրեշտակապետներու տօնին հետ:

3) Բարսղի Հայրապետին տօնը սովորաբար Յունուարի սկիզբը կը հանդիպի. եւ օրացույցին մէջ կը նշանակուէր, հին սարքով, Յայտնութեան պահքի շաբաթ օրը. երբ այդ շաբաթը պակսէր, այն տօնն նախորդ Դեկտեմբեր ամսուն վերջին շաբաթը: Յայտնութեան պահքը Ծննդեան շրջանին փոխադրուէին վերջ, տօներու տարուբերում մը տեղի կ'ունենայ. այդ պատճառով Ս. Բարսղի տօնն ալ յաճախ կը զետեղուէր շաբթուան ընթացքին ուրիշ լուր օր մը. այսպէս՝ աւելի քան հարիւր տարիէ ի վեր:

Այս տարի, 1957-ին, Յունուարի մէջ չէ զետեղուած Ս. Բարսղի տօնը, այլ տարուած է մինչև Դեկտեմբերի 21. այսինքն տօնը փոխադրուած է ծիսական մէկ տասական տարին կը սկսի Բուն Բարեկենդանով. ինչ որ թոյլատրելի է միայն Ապաղից

կոչուած տօներուն համար, որոնք կրնան Յունուարէն Յունիս փոխադրուիլ, Զատիկին կանուխ հասնելուն պատճառով, կամ ալ փոխադարձաբար: Բայց չէ կարելի տօն մը Յունուարէն մինչեւ Դեկտեմբեր յետաձգել, ու նախորդ տօնախմբութենէն (1956 Յունուարէն) 23 ամիս հետացնել, ըստ կամս:

★

Չենք ուզեր ուրիշ ալ մանրամասնութիւններու խնդրումով ձանձրացնել մեր ընթերցողները, որոնց արդէն համբերութիւնը թերեւս հաւցուցինք տոմարական ու ծիսական թուարկումներով: Այս բոլորին մէջէն կարեւորն էր ներկայացնել այն աշխատանքը որ տարուէ տարի կը կատարուի ի սպաս այս չնչին գրքոյկին, որու պաշտօնն է կանոնաւորել մասնաւորապէս եկեղեցական կեանքը իր բոլոր մանրամասնութիւններով: Յաճախ կը թերթատենք զայն, ու տարուան վերջը արդէն իսկ մաշած ու անգործածելի բան մը դարձուցած կ'ըլլանք, որուն համար այնքան սիրտ ու խնամք հաւցուցած է

անոր կազմողը, մանրամասն քննելով եւ լուծելով ամէն տարի ներկայացող հարցեր. այո՛, այսօր, այդքան տարիներու հաւաքածոյի մը դիմաց, դործը անշուշտ շատ աւելի դիւրին է, քանի որ յաճախ կը կրկնուին նման ձեւով ու կազմով. այնուհանդերձ կան միշտ մանրամասնութիւններ՝ որոնք կը պահանջեն լուրջ պատրաստութիւն եւ մանաւանդ փորձառութիւն: Վենետիկի Օրացոյցները, իրենց պարզութեան մէջ, որով կը ներկայանան այսօր, առանց տոմարական բարդութիւններու, իրօք ցոյց կու տան այդ հմտութիւնը եւ մասնագէտի տիրապետութիւնը:

Իսկ եթէ նկատի առնենք օգտերեւութաբանական գուշակութիւններու եւ աստղաբանական կարեւոր տուեալներու ներկայացումը, չենք կրնար առանց հիացումի փակել այդ հին էջերը, արդարօրէն դնահատելով անոնց բոլոր յայտնի կամ ծածուկ վաստակաւորները՝ որոնց թանկագին ժամանակին ծնունդ է ժամանակի այդ չքնաղ յայտարարը, որ ամէն տարի մեզի կ'աւետէ ուրախ ամանորը եւ կը դառնայ մեր ալ կեանքին տարեգիրքը:

ՔՆՆԱՍԷՐ

ՀԱՅՐ ՍԱՀԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՀԱՅՐ ՍԱՀԱԿ... այս երկու պարզունակ բառերուն մէջ կը ներկայանայ ինք ամբողջ. այս երկու պարզունակ բառերով կը ճանչնային զինք ամէնքը. այս երկու պարզունակ բառերով, աւա՛ղ... այդ ամէնքը եկան ողջունելու իր դադաղը եւ ամէնքը թրջելու իր թարմ հոգակոյտը:

Բարի, չա՛տ բարի հայրիկի մը տիպարն էր ան, մշտնափափա եւ սիրալիւ՝ ամէնուն հանդէպ անխտիր: Թշնամի չէր կրնար ունենալ. կը բաւէր պահիկ մը հետը տեսակցել, իրենն ըլլալու համար յաւիտեան:

Կը սիրէր մանաւանդ մանուկները, հայ մանուկները, որոնց համար ինք համակ նուիրում էր: Սրբազան բան մը ունէր իրեն համար հայ մանուկը, որուն վրայ կը դուրսդուար. ու կը ջանար դրոշմել այդ անմեղ հոգիներուն մէջ ազնուական սէր մը, սէրը հայրենիքին, որուն կարծէք ինք մէկ հինաւուրց մարդարէն էր, աշխարհ եկած արծարծելու համար մեր նախնեաց հոգին եւ վաղեմի աւանդութիւնները:

Հեղահամբոյր, խօսակցութեան մէջ սրբամիտ եւ զուարթասէր, ընկերութեան մը քաղցրութիւնն էր եւ ոգեւորիչ շնորհ, որ կը հրճուէր՝ երբ իր շուրջ տեսնէր նուիրում քարեկամներ ու կատակասէր մտերիմներ. մերթ կ'ունկնդրէր իր ծխամորձին ամպերուն մէջէն, անոյշ քմիծաղով մը. մերթ սրամտօրէն կը պատասխանէր, կը վիճաբանէր, կը քալէր, ամէնուն ուղղութիւնը իր վրայ, եւ ինք՝ դիւթողը բոլորին:

Հայրիկ մըն էր վաղեմի մէջ. հայրիկ մը նաեւ դպրոցին մէջ. հայրիկ մը նաեւ աշակերտներու ծնողներուն հետ, բարեկամներու հետ, որոնք բոլոր զինք պաշտելու չափ կը սիրէին: Ու չէին կրնար չսիրել. քանի որ անիկա ամբողջ իրենցն էր: Տեսակ մը ազգային եւ ընդհանրական

դաստիարակ, նաեւ ծնողներուն: Գիտէր միշտ իր թելադրութիւնները, օգտաշատ յորդորները, խրատները, ի հարկին, ճիշտ տեղը կատարել, անուշով համակել. Երբեմն նաեւ կ'ու անուշութեամբ. այնքան որ՝ հաճոյք մըն էր իրմէ յանդիմանուիլն անդամ: Ուղղամտութիւն, ողջամտութիւն եւ լուսամիտ ընթացք մը կ'ուղէր նշմարել ամէնուն մէջ. եւ ի սէր ատոր, ուխտեալ տաքեալի մը պէս կը դործէր միշտ:

Անբասիր, հաւատաւոր եւ երկիւղած եկեղեցական մըն էր միանգամայն, որ իր օծեալ ճակատին կու տար բացառիկ շնորհ մըն ալ, իրեւ հոգեւոր հայրիկ մը բոլոր զինք սիրողներուն:

Անունն ալ ՍԱՀԱԿ. լրումը հայրութեան զաղափարին. կարծես նախախնամութեանն զրուած սրբազան կնիք մը: Մեր անմահ թարգմանիչ Ս. Սահակի ողին ու շունչն էր որ կը կրէր, ու կ'ուղէր զայն ծաւալել ամէնուն մէջ, աշակերտ թէ վարդապետ:

Ազգային անցեալի յիշատակներուն դերազանցօրէն փարած, իբր բազմահմուտ պատմաբան եւ խորթափանց քաղաքագէտ, Հայոց պատմութիւնը իրեն համար դարձուցած էր հրաշալի բաղին մը, ուր երբ բարձրանար իբր վաղեմի քրմապետ մը երկնախօսիկ, Հայկի եւ Մեծն Տիգրանի հրաժառ հոգիներն էին որ կ'արթնցնէր իր ունկնդիրներուն մէջ, պաշտամունքի համող սէր մը արծարծելով անոնց հոգիներուն մէջ:

Կրօնքի եւ ազգութեան գոյգ զաղափարներուն նուիրում ատաքեալն էր ան, որ զիտէր գերազանցօրէն ձուլել եւ ներդաշնակօրէն համադրել այդ երկուքը: Ազգին նուիրում ճշմարիտ եկեղեցականը, եկեղեցւոյ նուիրում ճշմարիտ ազգասէրն էր ան: Կ'սպրէր հայրենի բարքերու վերա-